ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ երիտասարդներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ: Այսօրը ձերն է և օրվան նվիրված բոլոր բարեմաղթանքների ու շնորհավորանքների հասցեատերը դուք եք: Ձեր երիտասարդական ավյունով, անսպառ եռանդով ու կարողություններով, ցանկացած մարտահրավերների դիմակայելու ձեր պատրաստակամությամբ դուք շարունակում եք մնալ մեր երկրի առաջընթացի եւ զարգացման ամենակարևոր օղակներից մեկը: Ուրախությամբ արձանագրում ենք, որ մեր կողքին ապրող ու աշխատող երիտասարդները, կարևորելով իրենց դերակատարումը հայրենի բնօրրանում, փորձում են թարմ շունչ հաղորդել մեր համայնքային կյանքին՝ նպաստելով մեր համայնքի թե՛ մշակութային և թե՛ սպորտային կյանքի զարգացմանն ու առաջընթացին:

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքի ավագանու անունից ևս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ, վստահեցնում եմ, որ Արարատի համայնքապետարանը պատրաստ է օժանդակելու կառուցողական ձեր բոլոր նախաձեռնություններին, միասին կյանքի կոչելու իրատեսական ցանկացած ծրագիր, որը նպատակաուղղված կլինի մեր համայնքի շենացմանն ու հասարակական կյանքում երիտասարդության ակտիվացմանը:

Ցանկանում եմ, որ միշտ լինեք միասնական, համերաշխ ու կառուցողական՝ նպատակներով, գաղափարներով և գործով՝ հանուն մեր համայնքի ու երկրի զարգացման:

Աշխատե՛ք, զարգացրե՛ք ձեր փաղանդն ու հմտությունները, սիրե՛ք, շա՛տ սիրեք հայրենիքը, մարդկանց և աշխարհը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ